12183

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 04 » 10 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0185-21

Ձեռնարկողը՝ ***«Վիկակո» ՍՊԸ***
Արարատի մարզ, գ. Արարատ Զորավար Անդրանիկի փ. փ. 8

Գործունեությունը՝ ***Անիպեմզայի պեմզայի և տուֆերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0185-21

< 04 **>** 10 **2021թ.**

Շիրակի մարզի Անիպեմզայի պեմզայի և տուֆերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Վիկակո» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Անիպեմզա բնակավայր

Ներածական մաս. Անիպեմզայի պեմզայի և տուֆի հանքավայրը գտնվում է Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ ափին, Անիպեմզա գյուղի հարևանությամբ, Անի երկաթգծի կայարանից 6 կմ հեռավորության վրա: Մոտակա բնակավայրերն են Մարալիկ քաղաքը, Պեմզաշեն, Բագրավան և Հայկաձոր գյուղերը, որոնց հետ հանքավայրի տարածքը կապված է ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով: Հայցվող տարածքը գտնվում է Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա ու Բագրավան գյուղերի վարչական սահմաններում:

Օգտակար հանածոյի համար նախատեսվող 4.5հա մակերեսով ընդերքի տեղամասի հողերի 1.93հա մակերեով տարածքի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, մնացած 2.57հա մակերեսով հողերն ըստ նպատակային նշանակության գյուղատնտեսական են, ըստ հողատեսքի՝ արոտավայրերի:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 07.07.1968թ. թիվ 5408 արձանագրությամբ, հետևյալ քանակներով և կարգերով՝ A կարգով՝ 4742.2մ^3, այդ թվում՝ 2243.9մ^3 տուֆ, B կարգով՝ 20475.9մ^3, այդ թվում՝ 10556.2մ^3 տուֆ, C1 կարգով՝ 13500.5մ^3, այդ թվում՝ 2712.7մ^3 տուֆ, արտահաշվեկշռային՝ C1 կարգով՝ 4511.7մ^3, այդ թվում՝ 2712.7մ^3 տուֆ: Տուֆի պաշարները հաստատվել են որպես հումք շինաքարերի արտադրության համար, բլոկների 35.6% միջին ելքով: Պեմզայի պաշարները հաստատվել են որպես թեթև լցանյութ:

Նախագծով նախատեսվում է.

-հանքարդյունահանման աշխատանքները կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով (260օր),

- հանքավայրի շահագործումը իրականացնել 50 տարում,
- կատարել խախտված հողերի լեռնատեխնիկական վերակուլտիվացիա,

-բացահանքի վերջնական եզրագծի սահմաններում ներառված տուֆերի զանգվածի հաշվեկշռային պաշարները կազմում են 1408500.0մ^3 ,

- բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ տուֆի զանգվածի կազմում է 24400մ^3 արդյունահանվող պաշար, կամ 26820մ^3 մարվող պաշար,

Մակաբացման ապարների ոչ մեծ հզորությունը, տեղանքի ռելիեֆը և երկրաբանական ու հիդրոերկրաբանական պայմանները թույլ են տալիս հանքավայրի շահագործումն իրականացնել բաց եղանակով: Նախագծվող բացահանքերը կունենան հետևյալ պարամետրերը.

- առավելագույն երկարությունը – 270մ,
- առավելագույն լայնությունը – 240մ,
- առավելագույն խորությունը – 35մ,
- օտարման տարածքը – 4.5հա,
- տուֆերի հաշվեկշռային պաշարների ծավալը – 1408500.0մ^3,
- տուֆերի արդյունաբերական պաշարների ծավալը – 1340892.0մ^3,
- մակաբացման ապարների ծավալը - 59625.0մ^3.

Հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում նախագծային կորուստները պայմանավորված են օգտակար հաստաշերտի տեղադրման տարրերից և լեռնատեխնիկական պայմաններից: Դրանք ընդհանուր բացահանքային կորուստներ են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում: Այդ կորուստները կազմում են 67608.0մ^3 կամ 4.8%:

Մակաբացման ապարների ծավալները հաշվարկվել են ըստ մակաբացման 0.044մ^3/մ^3 գործակցի:

Մակաբացման ապարները 59625.0մ^3 ծավալով բացահանքի վերջնական եզրագծում ներկայացված են բերվածքային ապարներով՝ 50625.0մ^3 և հողաբուսական շերտով՝ 9000.0մ^3: Մակաբացման ապարների միջին հզորությունը կազմում է 1.3մ: Մակաբացման աշխատանքները կատարվում են Т-170 բուլդոզերի օգնությամբ, որի արտադրողականությունը նշված աշխատանքների ժամանակ կազմում է 600մ^3 /հերթ: Մակաբացման ապարները առանց նախնական մշակման՝ բերվածքային ապարները և հողաբուսական շերտը, առանձին-առանձին, բուլդոզերի օգնությամբ կուտակվում են աշխատանքային հանքաստիճանից՝ 10-15մ հեռավորության վրա, որից հետո 0.65մ^3 շերեփի տարողությամբ Caterpiller մակնիշի էքսկավատորով բարձվում է КамАЗ-5511 մակնիշի ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվում 0.15կմ միջին հեռավորության վրա, բացահանքի տարածքում նախատեսվող ներքին լցակույտ: Լցակույտում հողաբուսական շերտի ապարները պահեստավորվում են առանձին, իսկ մակաբացման ապարները և արտադրական թափոնները՝ միասին: Բացահանքի շահագործման մինչև 7-րդ տարին ներառյալ, լցակույտային ապարները, մակաբացման ապարները 9912.0մ^3 ծավալով, այդ թվում հողաբուսական շերտը 1785.0մ^3 ծավալով, արտադրական թափոնները 157175.0մ^3 ծավալով տեղակայվում են ներքին լցակույտերում, տեղադրված բացահանքի շահագործման համար նախատեսվող տարածքում, շահագործվող տարածքից շուրջ 150մ դեպի հարավ: Արտադրական թափոնները և փուշտան տեղակայվում են միասին: Լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 1.3հա: Լցակույտը ունի միջինը՝ 10.0մ բարձրություն, թեքությունը a= 300: Հողաբուսական շերտը տեղադրվում է առանձին լցակույտով, որը

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

զբաղեցնում է 0.1հա տարածք: Շահագործման 8-րդ տարուց սկսած, երբ բացահանքի շահագործված տարածքում կառաջանա լցակույտային աշխատանքների համար անհրաժեշտ տարածք՝ շահագործմանը զուգնթաց մակաբացման ապարները կսկվեն տեղափոխվել դեպի շահագործված տարածք: Շահագործված տարածք են տեղափոխվում նաև ներքին լցակույտի ապարները:

Հայցվող տեղամասի կոորդինատներն են ARM WGS-84 համակարգով .

1	X=8381243.0	Y=4480412.0
2	X=8381213.0	Y=4480430.0
3	X=8381202.0	Y=4480459.0
4	X=8381170.0	Y=4480473.0
5	X=8381132.0	Y=4480534.0
6	X=8381026.0	Y=4480536.0
7	X=8380987.0	Y=4480476.0
8	X=8380970.0	Y=4480503.0
9	X=8381056.0	Y=4480611.0
10	X=8381081.0	Y=4480694.0
11	X=8381267.0	Y=4480638.0
12	X=8381285. 0	Y=4480582.0
13	X=8381312.0	Y=4480538.0

Կենսաբանական ռեկուլտիվացիայի կենթարկվի բացահանքի տարածքը և արտադրական հրապարակը: Կենսաբանական ռեկուլտիվացման հաշվարկների համար օգտագործվել է ոլորտում ընդունված 400000 դր/հա գործակիցը: Ընդամենը 4.58հա x 400000 դր/հա = 1832.0 հազ.դրամ: Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 3057.6հազ. դրամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ.դրամ:

Հանքավայրի տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Բուն հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա և ապրելավայրեր:

Հանքավայրը գտնվում է բնության հուշարձաններից 1.2-5կմ հեռավորությունների վրա և դրա շահագործման արդյունքում հուշարձանների վրա բացասական ազդեցությունը բացառվում է:

Բացահանքի աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրեկան 3 անգամ)՝

- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար,
- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
- խախտված տարածքների վերականգնում /ռեկուլտիվացիա/:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով հայցվող տեղամասի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

Պատճառաբանական մաս. Շիրակի մարզի Անիպեմզա համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Շիրակի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով,

շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վիկակո» ՍՊԸ կողմից ներկայացված Շիրակի մարզի Անիպեմզայի պեմզայի և տուֆերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մեսրոպյան